ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«13» 02 2023թ.
№ ԿԼՄՊ/Ա-209

«ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ի (04715288)
գլխավոր տնօրեն Գ. Ղազարյանին
հասցե՝ ՀՀ, ք. Էջմիածին, Տեր Գաբրիելյան 22
հեռ. 060-40-01-51

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ի միջև 20.06.2022թ. կնքված N ՄԱԾՁԲ-22-23-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ն 2022թ. 3-րդ եռամսյակում պետք է մատուցեր Պայմանագրի 21-րդ չափաբաժնով նախատեսված 2 հատ ծառայություն, սակայն մատուցել է միայն 1 հատ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. փետրվարի 10-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը վերը նշված չափաբաժնով նախատեսված 1 հատի մասով:

Տեղեկացնում եմ, որ «ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 7 074 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 5.3 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 15.12.2022թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «ՌԱԴԱՐ-ԱՎԻԱ» ՓԲԸ-ն կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ ընկերության կողմից խախտվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am